

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ-գանատական յարաբերութիւններու մսխուող ներուժը

Վերջերս, ՀՀ Արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեանի՝ Օթթուա կատարած կարճատեւ այցելութիւնը, որուն նպատակը հայ-գանատական հերթական քաղաքական խորհրդակցութիւններուն մասնակցելն էր, անցաւ զրեթէ աննկատ: Արարողակարգային այս հանդիպումները շօշափելի ոչ մէկ արդիւնք տուին:

Գանատահայութիւնը առաջին իսկ օրէն եղած է երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման գլխաւոր շարժիչ ուժը: Պետական մակարդակի խնդիրներէն անդին՝ այս կապերու իրական ողնաշարը միշտ եղած են համայնքային յարաբերութիւնները: Անցեալին՝ այսինքն նախքան Փաշինեանի իշխանութեան գալը, նմանօրինակ այցելութիւնները առիթ կը ստեղծէին, որ համայնքը հիւրընկալէր ժամանող զիւրաւագէտը՝ ստեղծելով շփման կարեւոր հարթակներ այն գաղութին հետ, որ այս կապերուն հիմնասիւնն է: Այսօր այդ մէկը այլեւս տեղի չ'ունենար, ոչ ալ համայնք

քի լայն խաւերը յատուկ հետաքրքրութիւն ունին զարգացնելու կամ ամրապնդելու այդ կապը, քանի զեռ Երեւանի մէջ կը գործէ ներկայ իշխանութիւնը: Հարցը հիւրընկալելու փափաքը չէ, այլ այն ցաւալի իրականութիւնը, որ պետութեան վարած քաղաքականութեան պատճառով սփիւռքը մեկուսացուած է եւ այլեւս չի կրնար խաղալ իր կարեւոր դերը՝ զեր մը, որուն Հայաստանը այնքան խիստ կարիքն ունի, որ քան ալ փորձէ նսեմացնել զայն: Իրականութիւնը այն է, որ առանց հզօր համայնքի դերակատարութեան՝ Գանատան որեւէ լուրջ հետաքրքրութիւն պիտի չունենար Հայաստանի հանդէպ:

Վերջին 6-7 տարիներուն հայ-գանատական յարաբերութիւնները զգալիօրէն ընդլայնուեցան քաղաքական եւ զիւրաւագիտական ճակատներու վրայ, ինչ որ պսակուեցաւ դեսպանատան բացումով: Գանատան ժամանակին այն եզակի երկիրներէն էր, եւ զեռ որոշ չափով է, որ Արցախի հարցով ունէր յարաբերաբար

սկզբունքային կեցուածք: Սակայն այսօր այդ կեցուածքը հետզհետէ կը մարի, քանի որ Գանատան եւս, արեւմտեան այլ երկիրներու նման եւ նոյնինքն Հայաստանի իշխանութիւններու մղումով կ'անտեսէ հարցը՝ զայն զոհաբերելով Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ այսպէս կոչուած «խաղաղութեան գործընթացին» խորանին: Մինչ Թուրքիան եւ Ատրպէյճանը հետեւողական կերպով կ'ամրապնդեն Գանատայի հետ իրենց կապերը, Հայաստանը, չունենալով տնտեսական հզօր լծակներ, կը մսխէ նաեւ քաղաքական եւ մարդկային յարաբերութիւններու հարուստ ներուժը:

Ի վերջոյ, ի՞նչ ըրաւ Կոստանեան Օթթուայի մէջ: Ի՞նչ ձեռքբերումներ ունեցաւ: Ոչի՛նչ, բացի քանի մը լուսանկարէ: Առանց համայնքի համալրող աշխատանքին եւ յարատեւ քաղաքական հետապնդումներուն՝ այս յարաբերութիւնները չուտով պիտի մատնուին մոռացութեան, մանաւանդ՝ Գանատայի այսօրուան յարափոփոխ քաղաքական դաշտին մէջ:

ՀՅԴ ԳԵՄ-ի հովանաւորութեամբ Կապանի մէջ մեկնարկուած է «Քրիստափոր Արթին» ճամբարը



Կարդալ էջ 4



Համա-ՀՄԸՄ-ական 13-րդ բանակումը աւարտեցաւ մեծ յաջողութեամբ



Կարդալ էջ 5

ՀՅԴ Գանատայի պատանեկան միութեան անդամները մասնակցեցան 2026-ի Հայաստանագնացութեան



Կարդալ էջ 3

Սաղաթէլեան՝ իշխանութիւններուն. «Ժողովուրդի մեծամասնութեան անունով երկիրը նոր արկածախնդրութեան տանելու լիազօրութիւն չունիք»

ԵՐԵՒԱՆ.- ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան յայտարարեց, որ ընդգիծութիւնը խորհրդարանին մէջ պիտի շարունակէ իր քաղաքական պայքարը եւ պիտի բարձրաձայնէ Հայաստանի անվտանգութեան, Պաքուի մէջ պահուող հայ զերիներուն, բռնադրաւուած տարածքներուն եւ արցախահայութեան հաւաքական վերադարձի իրաւունքին հարցերը:

Կարդալ էջ 8



Dre Tamar Stambouliau
Dentiste généraliste
514 337-0007
info@espace32.ca

2663 RUE DE SALABERRY
MONTREAL, QC H3M 1L1

Espace32.ca





Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատէր
Յարութ Միփան

Հնտանէկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Յոբելեանական հանդիսություն Թորոնթոյի մէջ՝ նուիրուած Գանատայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի ծառայութեան ամենակներուն

ԹՈՐՈՆԹՕ-՝ Ուրբաթ, 17 Յուլիա 2026-ին, նախաձեռնութեամբ Գանատայի Հայոց Թեմի Կրօնական ժողովին ու Ազգային վարչութեան, կազմակերպութեամբ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ եւ Հովանաւորութեամբ տէր եւ տիկին Վահէ եւ Հռիփ Թոգմաքեաններուն, Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնէն ներս արժանաւայելի կերպով նշուեցան Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման 42-րդ, Եպիսկոպոսական Ձեռնադրութեան եւ Օծման 20-րդ, ինչպէս նաեւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդութեան 10-րդ ամեակները:

Զեռնարկին ներկայ գտնուեցան Թեմիս հոգեւոր հայրերը, Թորոնթոյի Հայ Աւետարանական համայնքի հովիւ Վերապատուելի Զօհրապ Սարգիսեանը, Օնթարիո նահանգի հայազգի երեսփոխան տիար Արիս Պապիկեանը, քաղաքական դէմքերու ներկայացուցիչներ, Ազգային վարչութեան եւ Ազգային Նրբփոխանական ժողովի անդամները, ազգային կառույցներու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հաւատացեալ ժողովուրդի բազմաթիւ գաւակներ:

Մրբազան համերգը սկիզբ առավ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ «Մեղրիկ Բարիբեան» կրտսերաց դպրաց դասին կողմէ կատարուած Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Ապա, բացման խօսքով Հանդէս եկաւ եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամ Բրշ. տղթթ. Գրիգոր Սրկ. Պէպէճեան, որ իր ողջոյնի խօսքին մէջ ներկաներուն բարի գալուստ մաղթեց եւ նշեց, թէ կազմակերպուած յօբելեանական այս Հանդիսութիւնը երախտագիտութեան արտայայտութիւն մըն է Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր նկատմամբ, որ իր տեսլականով, նուիրումով եւ հայրական հոգատարութեամբ համախմբած ու զօրացուցած է համայնքը՝ նպաստելով Թեմի հոգեւոր, ազգային եւ կրթական կեանքի զարգացման, միշտ ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն հայ ժողովուրդին:

Բացման խօսքն էտք, բեմ բարձրացան Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ «Մեղրիկ Բարեբեան» կրտսերաց դպրաց դասն ու «Ազնաւորեան» դպրաց դասը, որոնք իրենց հոգեպարար երգեցողութեամբ հանդիսաւոր մթնոլորտ մը ստեղծեցին:

Ձույզ դպրաց դասերուն ելոյթէն ետք, ուղերձով Հանդէս եկաւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհն. Միքայէլեան, որ ներկայացուց Սրբազան Հօր կեանքի եւ ծառայութեան հարուստ ուղին՝ Գպրեկանքի տարիներէն մինչեւ Լիբանան, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Միացեալ Նահանգներ, Սուրիա, Իրան եւ ապա Գանատա, ուր ան միշտ ծառայած է նոյն նուիրումով՝ ի սպաս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին։ Տէր Հայրը յատկապէս շեշտեց Սրբազան Հօր հովուական, կրթական, ազգային եւ եկեղեցաշինութեան վաստակը, անոր մշտական զօրակցութիւնը Հայաստանին ու Արցախին, ինչպէս նաեւ այն առաջնորդական տեսլականը, որով վերջին տասը տարիներուն հարստացուց Գանատայի Հայոց Թեմի հոգեւոր, կրթական եւ համամայնաբային կեանքը։ Իր խօսքի աւարտին ան շնորհաւորեց Յօրենեար Սրբազան Հայրը՝ մաղթելով առողջութիւն, երկար ու արգիւնակէտ տարիներ եւ Աստուծոյ առաւ օրհնութիւնը՝ չարուհակելու իր նուիրական առաքելութիւնը։

Այնուհետեւ, իսոթք առաւ Օնթարիո նահանգի Խորհրդարանի Հայազգի անդամ տիար Արիս Պապիկեան, որ իր կարգին շնորհաւորեց Սրբազան Հայրը։ Ան նաեւ փոխանցեց Օնթարիոյի վարչապետ Տակ Ֆորտի ջերմ բարեմաղթութիւններն ու շնորհաւորական գիրքը՝ յօբեյեական այս նշանակալից առիթին։

Ապա, սկիզբ առաւ Սրբազան Համերգի երկրորդ բաժինը, որուն ընթացքին ներկայացուեցաւ փունջ մը հայ եկեղեցւոյ հնագոյն շարականներէ՝ արդի գործիքաւորումներով, սակայն պահպանելով անոնց աւանդական ոգին, հնութիւնն ու արժէքը:



Ութ շարականներուն գործիքաւորումները կատարած էր Մայիսթոր Արմէն Ամիրխանեան, իսկ զանոնք մեկնաբանեցին՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրումեան, Արժ. Տ. Նշան Քէն. Մանուկեան, Բրշ. Գէորգ Սրկ. Գատէճեան եւ սիրուած ու հանրաժանօթ երգիչ Էլի Պէրպէրեան:

Ապա, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ կողմէ շնորհաւորական խօսք արտասանեց Վերապատուելի Զօհրապ Սարգիսեան:

Հանդիսութեան աւարտին, եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Գերապատիւ Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրաթեան բեմ հրաւիրեց Հանդիսութեան մասնակիցներն ու եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամները, եւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մեծ ընտանիքին ու հաւատացեալ ժողովուրդին անունով, Սրբազան Հօր նուիրեց ոսկեզօծ Առաջնորդական գաւազան մը՝ մաղթելով, որ Սրբազան Հօր առաջնորդական ասան միշտ ծաղկեալ մնայ եւ շարունակէ իր օրհնաբեր առաքելութիւնը:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքը փոխանցեց ներկաներուն. Ան ըսաւ. «Այս պահուն սիրտս խոր յուզումով եւ երախտագիտութեան զգացումներով կը լեցուի, երբ կը նշուին իմ ծառայական կեանքի տարբեր հանգրուաններու ամեակները: Նախ եւ առաջ փառք եւ գոհութիւն կը վերառաքեմ առ Ամենակալ եւ Ամենաբարի Աստուած, որ իր անսահման ողորմութեամբ կանչեց ու առաքեց զիս, զօրացուց ինծի եւ արժանի դարձուց ծառայելու իր Սուրբ Եկեղեցւոյ եւ սիրեցեալ մեր ժողովուրդին:

Ամեհակները պարզապէս թիւեր չեն. անոնք ծառայական կեանքի հանգր-
ուաններ են, արժեւորման առիթներ են, միաժամանակ նաեւ կամքերը պրկելու եւ
նոյն հաւատքով ու սիրով ծառայութիւնը շարունակելու կոչ՝ հաւատարիմ մնալով
Աստուծոյ, շարունակելով մեր հայրերուն ուղին, պաշտպանելով մեր ժողովուր-
դի արդար իրաւունքները եւ պահպանելով մեր ինքնութիւնը անաղարտ պահող
արժէքները՝ յանուն գալիք սերունդներուն:

Այս ամեակները ինծի համար նաեւ ուխտի վերանորոգման առիթ են: Այս պահուն դարձեալ կը նորոգեմ իմ ուխտը՝ շարունակելու ծառայել Աստուծոյ, Հայ Եկեղեցւոյ եւ մեր սիրելի ժողովուրդին՝ նոյն հաւատքով, նոյն սիրով, նոյն պատ-
րաստականութեամբ եւ նոյն յանձնառութեամբ»:

Առաջնորդ Սրբազան Հօր «Պաշպանիչ» աղօթքով եւ «Կիրիկիա» մաղթերգի միահաճմուն երգեցողութեամբ յորեյնեական Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ:

Այս առիթով, մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք Կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն եւ մեր բոլոր կամաւորներուն, որոնք անձնուէր ծառայութեամբ մեծապէս նպաստեցին յօբելեանական այս Հանդիսութեան փայլուն յաջողութեան:

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԵՈՐԴԱՐԱՆԻ

**ՀՅԴ Գանատայի պատանեկան միության անդամները
մասնակցեցան 2026-ի Հայաստանագնացության**

ԵՐԵՒԱՆ.- Յուլիս 5-18, ՀՅԴ Գանատայի Պատանեկան միություն 29 անդամներ, վեց վարիչ-պատասխանատուներու եւ խումբի ընդհանուր պատասխանատու, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ Նորա Արուշեանի ընկերակցութեամբ, մասնակցեցան 2026-ի Հայաստանադնացութեան ծրագրին: 14-16 տարեկան պատանիները կը ներկայացնէին Թորոնթոյի եւ Քէնպէզի չըջանները:

Ճամբորդությունն նախօրեակին պատանիններուն ուղեւորութիւնը օրհնեցին Թորոնթոյի հոգեւոր հովիւը, Հայր Յակոբ Վրդ. Եագուպեանը եւ Լաւալի հոգեւոր հովիւ Տէր Յակոբ Քհն. Գեաղայեանը:

Հայաստան կեցուցեան ընթացքին պատանինները այցելեցին Երեւանի եւ Հայաստանի տարբեր շրջաններու պատմական, ազգային ու մշակութային վայրերը, ներառեալ՝ Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ, Սարդարապատ, Էջմիածին, Գեղարդ, Գառնի, Խոր Վիրապ, Տաթեւ, Գիւմրի, Դիլիջան, Հաղարծին եւ Սեւան:

Եռաբլուրի մէջ խուժմբը յատուկ յարգանքի տուրք մատուցեց նահատակ Քրիստափոր Արթինի շիրիմին, իսկ Պոռչեանի մէջ այցելեց զոհուած դաշնակցականներու գերեզմանները: Պատանինբըը այցելեցին նաեւ Դրաստա-մատ Կանայեանի շիրիմը եւ Հանդերպուժ ունեցան ազգային գործիչներու ու ազատամարտիկներու հետ:

Թաթուղ Կրպէեանի անուան ալբիւն մէջ պատանիները հանդիպեցան հե-
րոսի ալբիւն՝ Իրինա Բարսեղեան-Կրպէեանին, որ ներկայացուց իր ամուսնոյն
կեանքն ու պաշարը: Խուժմը ալբիւնը նաեւ ՀՅԴ Բիւրոյի երեւանի կեդրոնական
գրասենեակին ու թանգարանը եւ հանդիպում ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Ար-
մէն Խուստամեանի հետ:

Ծրագրերին մաս կազմեցին նաև խաչքարի քանդակագործությունների վարպետաց դաս, «Բերդ» պարային համոյթի ելույթ, Թումո ստեղծարար արհեստագիտություններու կեդրոն եւ Արամ Մանուկեան երիտասարդական կեդրոն այցելությունները: Վերջինիս մէջ դանատահայ պատանիները հանդիպեցան Հայաստանի պատանեկան միություններու անդամներուն՝ մասնակցելով ծանօթացման, խաղերու, երգի եւ պարի միացեալ ձեռնարկի մը:

Հայաստանադեմոկրատիկական պատանիներու առիթ ընծայեց մօտէն ծանօթանալու հայրենիքի պատմութեան, մշակոյթի ու ազգային արժէքներուն, ինչպէս նաեւ ամրապնդելու իրենց կապը Հայաստանի եւ հայութեան հետ:



Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ՀԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹՒՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

*Նոր Հասցէ՝

PERMIS DE QUÉBEC

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

«ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՒ «ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» (Բաղդատական, ԵՒ Սերմնահատիկներ...)

Զօն՝ Նորվան Արք. Զաքարեանին Գ.

Արդ, «հոգեւոր հայրենիք»ի եւ «հոգեւոր Հայաստան»ի բաղդատականը: Յովսէփեանց վարդապետի եւ Տէրեանի իմացքներուն «հոգեւոր»ը՝ նոյն նշանա-կութիւնը չունին:

Յայտնապէս, վարդապետին «հոգեւոր»ը կ’ընդգրկէ մշակութային տարածքը, բայց ի տարբերութիւն Տէրեանի «հոգեւոր»ին՝ քրիստոնէական առումով կրօնա-բարոյական է: Կը քաղեմ իր խօսքը, որուն նախապէս ակնարկեցի? «Քրիստո-նէական կրօնը (...) կամենում է աղ լինել կեանքի եւ քաղաքակրթութեան բոլոր երեւոյթները համեմելու համար: Առանց կրօնի եւ բարոյական կատարելութեան ձգտման, ոչ միայն անտարբերութիւն է զարթնում դէպի ազնիւն ու վսեմը, դէ-պի առաքելինն եւ մարդասիրականը, այլեւ՝ քաղաքակրթութիւնը, գիտութիւնն ու արուեստը չարիք է դառնում. ետական, մոլեգին եւ զազրելի նպատակների մի-ջոց»: Ըստ իրեն, ուրեմն, մշակոյթը անհրաժեշտ է «համեմել» կրօնական աղով: Այլ յօդուածի մը մէջ, այն աղին համար հետեւեալը գրած է. «Աղն է, որ համ է տալիս կերակրին, առողջարար եւ սննդարար դարձնում եւ պահում նորան ապականու-թիւնից: Առօրեայ կեանքից առնուած այս օրինակով, Տէրը կամեցել է բացատրել քրիստոնէութեան եւ քրիստոնեայ մարդուն արժէքը երկրի մէջ, այսինքն՝ պատ-մութեան մէջ» («Կեանքի Աղը», «Հայց. եկեղեցի», Յունիս, 1943: Ներառնուած «Դէպի Լոյս եւ Կեանք» գիրքին մէջ):

Յովսէփեանց վարդապետի «հոգեւոր»ի մտածողութիւնը նրբութիւն մը ու-նի: Գրած է. «...եկեղեցին չի կարող ամբողջ հոգեւոր կեանքի ամփոփումը լինել »: Կը նշանակէ, թէ քրիստոնէականօրէն աղող «հոգեւոր»էն զատ՝ կայ նաեւ «հոգե-ւոր»ի այլ տարածք: «Նիւթական եւ աշխարհիկ բնաւորութիւն կրող քաղաքակր-թութիւնը նոյնպէս բարիք է», գրած է: Ըստ այս մտքին, նիւթական եւ աշխարհիկ քաղաքակրթութիւնը երբ կը ձգտի բարիք ըլլալ՝ կը մտնէ «հոգեւոր»ի տարածք: Այն բարիքը ամբողջութիւնն է բնութեան մէջ որեւէ քաղաքակրթութեան ձգտու-մին՝ ճշմարտութեան, բարութեան եւ գեղեցկութեան «մի նոր աշխարհ ստեղծել»ու: Բայց որպէսզի այս ձգտումը հասնի իր կատարելութեան՝ անհրաժեշտ է կրօնը, եւ մանաւանդ կրօններուն պսակը, որ քրիստոնէութիւնն է:

Տէրեանի յօդուածին մէջ ո’չ կրօնականի, ո’չ բարոյականի խօսք կայ, եւ ոչ ալ՝ եկեղեցւոյ: Իր «Հայ Գրականութեան Գալիք Օրը» յօդուածէն գիտենք, թէ ինք կա-տաղի հակադիերական էր: Գիտենք նաեւ՝ որ «կրօն» ըսելով հասկցած էր «աշխար-հագեացում, աշխարհավերաբերմունք»: Այս երկու բառերուն «աշխարհ» արմատը՝ յստակօրէն կ’ըսէ, թէ կրօնի իր հասկացողութիւնը երկնային տարեցըը կը մերժէր: Կրօնը իրեն համար աշխարհակեդրոն եւ մարդակեդրոն զգացողութեան եւ գիտակ-ցութեան, կեցուածքի ու յարաբերութիւններու վերաբերելու էր: Բանաստեղծին տեսութիւնը՝ զուտ գաղափարական իրականութիւն մը կամ ինքնութիւն մը ստեղ-ծելու մասին է: Այն գաղափարական իրականութիւնը՝ ըստ արեւմտեան աշխարհին նոր արժէքներ ստեղծելու կը հաւատայ: Անոնց կը վստահի հայութեան վերականգ-նումը, եւ անոր մշակութային ապագային ապահովումը: Ինչպէս գրած էի, Տէրեան մշակոյթի «գլխաւոր գործօններ» ճանչցած է լեզուն, գրականութիւնը, արուեստը, «մտքի» աշխատանքները, վստահաբար նաեւ՝ գիտութիւնը:

Դ.

Մենք որ դուրսն ենք, Սփիւռքի մէջ, եւ տեղէ տեղ գաղթելու կամայ–ակամայ շարժումէն բռնուած՝ «հոգեւոր հայրենիք» իմացքը ըսելիք ունի՞ր մեզի: Անշուշտ, Յովսէփեանց վարդապետ չէր կրնար սփիւռքեան մեր կացութիւնը մտածել այն օրերուն՝ երբ իր յօդուածը գրած էր:

Պարզ է, որ Սփիւռքի մէջ, ո’չ Յովսէփեանցի իմացքը եւ ո’չ իսկ Տէրեանի իմացքը անհրաժեշտ մակարդակի են: Նկատի ունիմ՝ որպէս ընդհանրական գիտակ-ցութիւն եւ մշակում: Տէրեանական առումով իմացքը, որ, ինչպէս ըսի, մշակութա-յին է, այստեղ, անհատ արուեստագէտներու պարագային, իրագործումներու յաջող հանդիսարան մըն է. գիտնականներու եւ այլազաններու պարագային՝ նոյնպէս: Բայց այն բոլոր իրագործումներէն խզուած իրականութիւններ են հայ հաւաքա-կանութիւնները, ապրող՝ սովորական օրեր, ուր հայկականութիւնը կը նմանի բեմ բարձրացած վեց կամ ութ պարողներու, որոնք անհամաչափութիւն եւ աններդաշ-նակութիւն կը ցուցադրեն անցեալի գեղջուկ եղանակներու վրայ: Վ. Օշականին ականջը խօսի, պիտի ըսէի...: Ինչպէ՞ս պիտի արարուի սփիւռքեան մշակութային հասարակաց համաչափութիւնը եւ ներդաշնակութիւնը: Որո՞նք պիտի արարեն: Այս մասով, զուտ մշակութային կազմակերպ, ծրագրաւորեալ գործունէութեան հեռանկարը կը ձգեմ այլոց, եւ որպէս եկեղեցական՝ կը փորձեմ Յովսէփեանց վար-դապետի ըսածներուն դառնալ: Բայց նախքան այդ՝

ՀՅԴ ԳԵՄ–ի հովանաւորութեամբ Կապանի մէջ մեկնարկուած է «Քրիստափոր Արթին» ճամբարը

Միւս Գեմ–ի հովանաւորութեամբ Կապանի մէջ մեկնարկուած է «Քրիստափոր Արթին» ճամբարը


ԿԱՊԱՆ.– ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան հովանաւորութեամբ, յուլիս 27–ին Սիւնի-քի մարզի Կապան քաղաքին մէջ մեկնարկուած է ՀՅԴ Հայաստանի Պատանեկան Միութեան՝ Քրիստափոր Արթինի յիշատակին նուիրուած անդրանիկ ամառ-նային ճամբարը: Հնգօրեայ ճամբարը պիտի շարու-նակուի մինչեւ յուլիս 31 եւ կը համախմբէ 2011–2016 թուականներուն ծնած շուրջ 100 պատանիներ:

Կապանի մէջ ճամբար մը կազմակերպելու նա-խաձեռնութիւնը ներկայացուած է ՀՅԴ Հայաստա-նի Պատանեկան Միութեան Վարիչ Մարմինին կողմէ՝ ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան Կեդ-րոնական վարչութեան: Առաջարկին մէջ շեշտուած են ներկայ աշխարհաքաղաքական պայմաններուն մէջ Սիւնիքի ունեցած ռազմավարական նշանակութիւնը, Կապանի պատանեկան աճող ներուժը, ինչպէս նա-եւ ճամբարը ապագային չըջանին մէջ պատանեկան կազմակերպութիւն մը հիմնելու մեկնակէտ դարձնելու կարելիութիւնը:

Առաջարկը ստանալէ ետք, ՀՅԴ ԳԵՄ–ի Կեդ-րոնական վարչութիւնը անմիջապէս յանձնառու դարձած է ծրագիրը կեանքի կոչելու աշխատանքին: Կազմակերպչական աշխատանքները ներառած են ճամբարի ընդհանուր տեսլականի եւ կառուցուած-քի մշակումը, պաշտօնական անուան ընտրութիւնը, տարբերանշանի ձեւաւորումը, ինչպէս նաեւ կազմա-կերպչական ու գործնական մանրամասնութիւններու համակարգումը:

Ճամբարի ծրագրին մաս կը կազմեն հայկա-կան աւանդական ժողովրդական երգերու եւ պարե-րու ուսուցում, գործնական աշխատանոցներ, մտա-յին ու խմբային խաղեր, մարզական մրցումներ եւ տարբեր նախաձեռնութիւններ, որոնք նպատակ ու-նին զարգացնելու պատանիներուն անհատական կա-րողութիւնները, առաջնորդութեան ոգին, խմբային աշխատանքի հմտութիւնները եւ հայկական մշակոյ-թին ու ազգային ինքնութեան հետ անոնց կապը:

«Քրիստափոր Արթին» ամառնային ճամբարը



Նորվան Արքեպիսկոպոս 2023–ին հարց տուած է, թէ Հայ եկեղեցին անցնող մէկ դարուն յատուկ ուշադրութիւն դարձուցա՞ծ է սփիւռքեան աշխարհիմացու-թիւն մը ստեղծելու վրայ: Եւ պատասխանած՝ «Դժուար է ըսել »: Ապա յիշած է, թէ անցեալ դարու 20–ական թուականներէն սկսեալ՝ «ակնյայտօրէն անկարելի էր» նման ջանք մը, քանի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ծանր պայմաններու մէջ էին: Անցած են այդ ժա-մանակները եւ կ’երեւի, թէ ատենն է, որ Հայ եկեղեցին մտահոգուի սփիւռքեան աշխարհիմացութիւն մը ձեւաւորելու մասին, որպէսզի կարենայ աշխարհով մէկ ցրուեալ իր հօտին շարունակականութիւնը ապահովել եւ զարգացնել:

Այն աշխարհիմացութեան համար «հոգեւոր հայրենիք» վարդապետողին «Դէպի Լոյս եւ կեանք» գիրքէն սերմնահատիկներ կը քաղեմ.

Նախ եւ առաջ ու միշտ՝ Սփիւռքի «բարի հող»ը պիտի յիշէ Տիրոջ խօսքը, որ կ’ըսէ՝ «Ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն գիս, մինչ աւուր կայ, գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել» (ՅՏ 9.Ա), եւ արդիւնաւորէ: Ապա՝

1.– Յանուռն արդարութեան՝ ուր որ պէտք է լսելի պիտի դարձնէ մեր գլխուն եկած «անսահման մեծ ողբերգութիւնը»:

2.– Իր այս ջանքերուն մէջ պիտի յստակ դարձնէ, թէ «ոչ մի ժողովրդի թշնա-մի լինել չենք կամենար», քանի որ «յաւիտենական թշնամութիւնից ոչ ոք կարող է օգտուել »: Արդարութիւնն է, որ ազնիւ, վսեմ եւ ճշմարիտ մարդկութիւն կ’արարէ: Ուստի՝ կը կարօտի վերականգնումի:

3.– Ներքին համերաշխութիւն պիտի հաստատէ, վստեղի «մինչեւ մենք իրար չհասկանանք, իրար ձեռք չմեկնենք լիովին, ազգի, եկեղեցու եւ հայրենիքի հետ կապուած ընդհանուր հարցերի մէջ, իրաւունք չունենք օտարներից սպասելու, որ մեզ հասկանան եւ լսեն»:

4.– Անընդհատ աշխատիլ եւ տքնիլ ներքին փոփոխութիւնը յառաջ բերելու համար. քանի որ «զօրեղ է թշնամին եւ ներքին, ուստի եւ նորա դէմ պիտի զինենք եւ մեր բարոյական բոլոր ուժերը»:

5.– Պիտի բարենորոգէ հաւատքի իր տունը, որովհետեւ անոր պատմութիւնը

«աղաղակում է», թէ «բարոյական եւ քաղաքակրթական մի վսեմ առաքելութիւն ունի կատարելու»:

6.– Պիտի ստեղծէ մթնոլորտը եւ պատրաստէ նոր ժամանակներու եւ պայ-մաններու իր մշակները:

7.– Աւանդութիւնը պիտի խօսեցնէ այսօրուան լեզուով:

8.– Հայ լեզուն ու մշակոյթը զարգացնէ այնպէս՝ մարդկային հոգին դիմէ դէ-պի կատարեալը:

9.– Աստուածատուր իր տաղանդը ի գործ պիտի դնէ ու ըլլայ ստեղծագործ:

10.– Պիտի տենչայ բարձրագոյնը, յուսայ հասնիլ «լուսոյ փարոս»ին՝ ալեկոծ կեանքի փոթորիկներէն յետոյ:

ԳԱՌՆԻԿ Աւ. Ք. Գ.

(Ծարուակելի 2 եւ վերջ)

Վաստակաշատ գանատահայ ՀՄԸՄ-ականներ

ՀՄԸՄ–ը իր լայնածավալ գործունէութեամբ եւ աշխարհասփիւռ մասնա–ծիւղերով հայեցի եւ ազգային դաստիարակութիւն կը ջամբէ նորահաս սերուն–դին։ Միութիւնը անցեալէն ի վեր կը շարունակէ իր առաքելութիւնը եւ պիտի շարունակէ գալիք տասնամեակներուն՝ շնորհիւ անշահախնդիր եւ նուիրեալ անդամներուն, որոնք միութեանական գիտակցութեամբ կ’աշխատին կանգուն պահել միութեան ջահը, զայն փոխանցելով յաջորդ սերունդներուն։

Գանատայի տարածքին ՀՄԸՄ–ը կը գործէ վեց մասնաճիւղերով եւ երկու նորահաստատ միաւորներով։ Աշխոյժ գործունէութեամբ եւ ծաւալուն աշխա–տանքով ՀՄԸՄ–ը ներգրաւած է հազարաւոր երիտասարդներ եւ պատանիներ, որոնք կը ծառայեն սկստական կամ մարզական շարքերէն ներս։

Տասնամեակներ շարունակ անոնց ծառայութեան եւ անխոնջ աշխատան–քի առ ի գնահատական, անոնք կ’արժանանան ծառայութեան կամ արժանեաց շքանշաններու։

Առ այդ, «Հորիզոն»ի մէջ պարբերաբար լոյս պիտի տեսնեն ԾԱՌԱՅՈՒ–ԹԵԱՆ շքանշանին արժանացած ՀՄԸՄ–ականներուն հակիրճ կենսագրական–ները եւ իրենց կողմէ տրամագրուած նկարները. հաւատալով որ անոնց ծա–ռայութիւնն ու նուիրումը խթան պիտի հանդիսանայ նորահաս սերունդին եւ օրինակ՝ հասնելու կատարելին։

ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ծառայութեան (1993) եւ Արտակարգ (2018) շքանշանակիր

1.– ԵՐբ եւ ինչպէ՞ս մուտք գործեցիք ՀՄԸՄ–ի շարքերը։

Երբ 9 տարեկան էի, հօրս թելադրանքով, որպէս գայլիկ, 1953–ին մաս կազմեցի Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) «Կամք» մարմնամարզական ակումբին։

2.– Կրնա՞ք ներկայացնել դրուագ մը, զոր կը յիշէք այդ օրերէն։

Միութեանական կեանքիս ամէնէն հաճելի եւ դաստիարակիչ դէպքը եղած է ՀՄԸՄ–ի Պատգամաւորական ժողովին առաջին մասնակցութիւնս։ Ծանօթա–ցում, միմոլորտ, զանազան մտայնութեան տէր քոյրեր եւ եղբայրներ, տար–բեր երկիրներու աւանդութիւններ, նորութիւններ, շաղկապում, բաժանում եւ գեղեցիկ յիշատակներ։

3.– Խ՞նչ պաշտօններ վարած էք միութեան մէջ։

Գայլիկութենէ սկսելով, անցած եմ սկստական շարքերը, հասնելով մինչեւ փոխ խմբապետի աստիճանին։ 13 տարեկանիս, մաս կազմած եմ կողո–վազնդակի եւ ավելիթիզմի կրտսեր դասակարգի խումբերուն։ Մասնակցած եմ, Աղեքսանդրիոյ մէջ կազմակերպուած սկստական բանակումներուն, արշաւ–ներուն եւ մարզական մրցաշարքերուն։ 1966 մարտին գաղթեցի Գանատա, Մոնթրէալ եւ իբրեւ ավելի մարզիկ մաս կազմեցի տեղւոյն ՀՄԸՄ «Կամք» մասնաճիւղին։

1970–ին մաս կազմեցի մասնաճիւղի յանձնախումբերուն եւ 1971–ին ընտրուեցայ վարչական։

1974–ին, երբ ՀՄԸՄ–ը համագաղութային կառոյցով օժտուեցաւ, ընտր–ուեցայ եւ մաս կազմացի Գանատայի առաջին Շրջանային խորհուրդին, մաս–նակցելով անոր նախապատրաստական աշխատանքերուն։ Այնուհետեւ, չա–րունակաբար մաս կազմեցի Մոնթրէալի վարչութեան, 1975–1978 վարելով ատենապետութեան պաշտօնը։ 1979–ին ընտրուեցայ ՀՄԸՄ–ի Գանատայի



Շրջանային վարչութեան անդամ, յաջորդաբար մինչեւ 1987, ստանձնելով վարչութեան ատենապետութիւնը. բացառութիւն եղաւ 1981 տարին, որովհե–տեւ Գանատայի մէջ կազմակերպուած Համա–ՀՄԸՄ–ական կողովազնդակի Ա. մրցաշարքին առիթով, այդ տարի գանձապահի պաշտօնով մաս կազմեցի կազ–մակերպիչ յանձնախումբին։

1987–էն մինչեւ 2005 մասնակցութիւնս բերի Շրջանային վարչութեան կազմակերպած զանազան աշխատանքներուն, ժողովներուն եւ շրջանի ներկա–յացուցչական բոլոր ժողովներուն։ Յայտնեմ նաեւ, որ իբրեւ Գանատայի շրջա–նի պատգամաւոր, մասնակցած եմ 5 Պատգամաւորական ժողովներու, որոնք տեղի ունեցած են Կիպրոսի, Յունաստանի եւ Լիբանանի մէջ։

4.– Խ՞նչ կը թելադրէք այսօր ներկայ ՀՄԸՄ–ականներուն։

Նոր սերունդի տղաքն ու աղջիկները նախ պէտք է անպայման մաս կազ–մեն ՀՄԸՄ–ի մեծ ընտանիքին, որպէսզի թրծուին գաղափարական դաստիարա–կութեամբ, սորվին օրինապահութիւն, կերտեն իրենց նկարագիրը եւ վերջապէս ունենան պատկանելիութեան զօրաւոր զգացումը։

Երիտասարդ ՀՄԸՄ–ականներէն կ’ակնկալուի, գործնական աշխատան–քով իրենց մասնկացութիւնը բերել ՀՄԸՄ–ի լայնածավալ գործունէութեան, սորվածը փոխանցել յաջորդ սերունդին, սատարելու համար միութեան յառա–ջացման եւ վերելքին։

Ուրախութեամբ կ’ուզեմ յայտարարել, թէ երեք զաւակներս ալ մաս կը կազմեն ՀՄԸՄ–ի շարքերուն։

Հարցազոյցը վարեց ՀՈՒՐԻՆԱՆ

Համա-ՀՄԸՄ-ական 13-րդ բանակումը աւարտեցաւ մեծ յաջողութեամբ

ԲԻԻՐԱԿԱՆ.– «Արարատի համար՝ կանգուն» նշանաբանով կազմակերպուած համա–ՀՄԸՄ–ական 13–րդ բանակումը Շաբաթ, 1 Օգոստոսին, իր աւարտին հասաւ Բիւրականի «Գառնիկ Մկրտիչ–եան» սկստական բանակավայրին մէջ տեղի ու–նեցած փակման հանդիսաւոր արարողութեամբ։

Իննօրեայ բանակումը համախմբեց աշխար–հի 26 երկիրներէ ժամանած շուրջ 900 սկստւտներ՝ նպատակ ունենալով ամրապնդել ՀՄԸՄ–ական կապերը, զարգացնել մասնակիցներուն սկստուտա–կան հմտութիւնները եւ ազգային ու միութեանական արժէքները փոխանցել նոր սերունդին։ Բանակումը յատկանշուեցաւ հարուստ յայտագիրով, բազմաթիւ այցելութիւններով եւ երկու նշանակալի իրագոր–ծումներով։

Փակման հանդիսութեան ներկայ գտնուե–ցան ՀՅԴ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձում–եան, ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Համազգայինի Կեդրոնա–կան վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեան, ՀՄԸՄ–ՀԱՍԿ–ի վարչութեան ներկայացուցիչներ եւ մեծաթիւ ծնողներ։

Հայաստանի եւ Արցախի քայլերգներու կա–տարումէն ետք, մրցանակներ յանձնուեցան բա–նակումի աշխատանքներուն եւ մրցումներուն լա–ւագոյն մասնակցութիւն ցուցաբերած պատուիրա–կութիւններուն ու սկստւտներուն։ Յուշանուէրներ տրուեցան նաեւ բանակումին կազմակերպման եւ յաջողութեան նպաստած խմբապետներուն, բժիշկ–ներուն, դասախօսներուն, կամաւորներուն եւ օժանդակ անձնակազմին։

Բանակումի ընդհանուր խմբապետ Ռուբէն Նալպանտեան իր հրաժեշտի խօսքին մէջ հաստա–տեց, որ բանակումը լիովին իրագործեց իր առա–ջադրած նպատակները՝ իրարու ծանօթացնելով

տարբեր երկիրներէ ժամանած սկստւտները եւ ամրապնդելով համա–ՀՄԸՄ–ական եղբայրու–թիւնը։ Ան յատկապէս ընդգծեց 600 սկստւտներու մասնակցութեամբ Արագած լեռան բարձրացումը եւ սկստւտներով աշխարհի մեծագոյն շուշանածաղիկի կազմութիւնը, որ արձանադրուեցաւ «Կինես»ի հա–մաշխարհային մրցանիշներու գիրքին մէջ։

ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչութեան անդամ Վահէ Թանաշեան իր կարգին շեշտեց, որ միու–թիւնը հիմնուած է ազգային ոգիի, եղբայրասի–րութեան եւ կարգապահութեան երեք անսասն արժէքներուն վրայ։ Ան բանակողներուն կոչ ուղ–ղեց իրենց շրջանները վերադառնալով բանակու–մին ոգին փոխանցելու իրենց մասնաճիւղերուն եւ իրենց գիտելիքներն ու փորձառութիւնները ծառա–յեցնելու ժողովուրդին։

Պաշտօնական խօսքերէն ետք, վար առնուե–ցան ինը օր շարունակ բանակավայրին մէջ ծա–ծանած դրօշները, իսկ բանակումին դրօշը յանձն–ուեցաւ ընդհանուր խմբապետին։ Հանդիսութիւնը փակուեցաւ բանակումի եւ ցտեսութեան երգերով՝ մասնակիցներուն կազմած մեծ շղթայով։

Փակման հանդիսութեան յաջորդեց Կիրակի, 2 Օգոստոսին, Երեւանի «Հարսնաքար» ճաշարանին մէջ կազմակերպուած խրախճանքը, որ համախմբեց աւելի քան հազար սկստւտներ եւ ՀՄԸՄ–ի բարե–կամներ։ Երեկոն խանդավառեցին երգիչներ Աբօ Սահակեան եւ Շսայի Ալթունեան։

ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչութեան անունով խօսք առնելով Վիգէն Աւագեան շեշտեց, որ արձա–նագրուած յաջողութիւնը նոր պարտաւորութիւն–ներ կը դնէ միութեան առջեւ։ Ան նշեց, որ յու–սալքութեան եւ ապազգայնացման պայմաններուն մէջ ՀՄԸՄ կը շարունակէ յոյս, հայրենասիրութիւն եւ հաւաքական ուժ ներշնչել հայ ժողովուրդին՝

պատրաստելով ազգային նպատակներուն ծառայող սերունդներ։

Բանակումի ընթացքին մասնակիցները Երե–ւանի մէջ կատարեցին աւանդական տողանցք, այցելեցին Ծիծեռնակաբերդ եւ Եռաբլուր, բարձ–րացան Արագած, ինչպէս նաեւ այցելեցին Կիւմ–րի, Սեւան, Սաղմոսավանք եւ Ապարան։ Շուրջ 350 սկստւտներէ բաղկացած պատուիրակութիւն մը Սուրբ Էջմիածնի մէջ ընդունուեցաւ Ամենայն Հա–յոց Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ։

Բանակավայրէն ներս կազմակերպուեցան սկստական խաղեր, զարգացման մրցումներ, մշակութային եւ հայկական արուեստներու օրեր, դասախօսութիւններ ու խարուկահանդէսներ։ Յա–տուկ ձեռնարկով նշուեցաւ նաեւ Լիզպոնի հերո–սական գործողութեան 43–ամեակը։

1978–ին սկիզբ առած համա–ՀՄԸՄ–ական բանակումներու պատմութեան մէջ 13–րդ բանա–կումը առանձնացաւ իր կազմակերպուածութեամբ, նորարար յայտագիրներով եւ արձանագրած հա–մաշխարհային իրագործումով՝ անգամ մը եւս հաս–տատելով ՀՄԸՄ–ի կենսունակութիւնն ու նոր սե–րունդներ պատրաստելու առաքելութիւնը։

CAMAM

3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5

397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6

45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4

To donate online www.camam.org

Տէժա վիւ մը՝ քանի մը ուրթուշներով

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն եւ անոնց արդիւնքիւ մեկնաբանութիւն մը՝ սփիւռքեան դիտանկիւնէն

Հայաստանեան քաղաքական իրադարձութիւն-ներուն քիչ թէ չատ հետեւող սփիւռքահայ հանդի-սատեսին համար, 7 յունիսի խորհրդարանական ընտ-րութիւններու ոչ այնքան անակնկալ արդիւնքէն մէկ ամիս յետոյ, Սահմանադրական դատարանի որոշումը եւ խորհրդարան անցած երկու ընդդիմադիր ուժերու՝ առանձին յայտարարութիւններով մանդատները վերց-նելու որոշումը սպասելի էին. 2021–ի պատկերով տէժա վիւ մը՝ քանի մը ուրթուշներով։

Տէժա վիւ՝ որովհետեւ իշխանափոխութիւն տեղի չունեցաւ, իշխող «Քաղաքացիական պայմանագիր»–ը (ՔՊ), որպէս առանձին կուսակցութիւն, Ազգային ժո-ղովին մէջ ունի կառավարութիւն կազմելու տոկոսի ներկայացուցչութիւն, եւ ընդդիմադիր դաշտը կը մնայ դաշինքի կարգավիճակով երկու քաղաքական ուժերու ձեռքերուն մէջ։ Ընդդիմադիր երկու խմբակցութիւն-ներու համագործակցութիւնը կամ միացեալ ճակատով հանդէս գալը առայժմ, լաւագոյն պարագային, բաղ-ձանք է, միգուցէ՝ օդին մէջ ինչ–որ խոստում։

Ինչ կը վերաբերի ուրթուշներուն, անոնցմէ ամէ-նէն ակնբախը Ազգային ժողովին մէջ անցնող հինգ տարիներուն «ամենամեծ ընդդիմադիր ուժ»–ի կար-գավիճակով հանդէս եկող «Հայաստան» դաշինքի առաջատարի դիրքի գիջումն է նորաստեղծ եւ ինք-զինք շատ շուտ հաստատած «Ուժեղ Հայաստան»–ին։ Այս վերջինը, հետեւաբար, պիտի ըլլայ ընդդիմու-թեան ուղիին առաջնային ճշդողը, եթէ երբեք երկու խմբակցութիւններուն միջեւ համագործակցութեան բաղձանք–խոստումը նուազագոյն հայեցակարգով մը ամրագրուի։ Եւ քանի որ նման համագործակցութիւն անցնող հինգ տարիներուն չարձանագրուեցաւ, եթէ երբեք այս անգամ իրականանայ, ապա պիտի արձա-նագրուի նաեւ ընդդիմադիր դաշտի որակական փոփո-խութիւն։

Երկրորդ ուրթուշը կը վերաբերի ՔՊ–ի ձայներու տոկոսային համեմատութեան, որ նուազ եղաւ 2021–ի՝ յիսուն տոկոսի շեմը անցնելու թոյլ տուած ձայներու տոկոսէն։ Միեւնոյն ժամանակ, սակայն, գուտ թուա-յին իմաստով, այս անգամ աւելի շատ քաղաքացիներ քուէարկած են ի նպաստ իշխող ուժին։ Գործնականին մէջ, հետեւաբար, յստակ է, թէ տոկոսային իմաստով նուազ ձայներ ստացած ՔՊ–ն, այնուամենայնիւ, պի-տի չկարենա՞յ իր ուզած օրէնսդրութիւնը անցընել՝ առանց ընդդիմութեան կողմէ որեւէ հակակշիռ բա-նեցնելու, կամ պիտի չյաջողի՞ ձախողեցնել ընդդի-մութեան իւրաքանչիւր նախաձեռնութիւն, թէկուզեւ պարզ յայտարարութեան մը կարգով, ինչպէս պատա-հեցաւ անցնող հինգ տարիներուն։

ՔՊ–ն նաեւ ձախողեցաւ ունենալ «սահմանադ-րական մեծամասնութիւն»՝ հակառակ պատերազմի անխուսափելիութեան սպառնալիքին, որ Փաշինեանը հնչեցուց ընտրապայքարի ժամանակ։ Բայց, դարձ-եալ, գործնականին մէջ ի՞նչ կը նշանակէ այդ մէկը կամ ինչպէ՞ս կը մեկնաբանուի՝ հաւանաբար միայն սահմանադրական օրէնքի մասնագէտները կարենան բացատրել։ Ամէն պարագայի, այդ մէկն ալ կարծես այլեւս այնքան ալ չի մտահոգեր երրորդ հետեւողա-կան անգամն ըլլալով ընտրութիւնները շահած ՔՊ–ն՝ որպէս կառավարման կամ, անկէ անդին, իր ծրագիր-ները առաջ տանելու լուրջ արգելք։

Նորընտիր Ազգային ժողովի յաջորդ գումարման այս առաջին պատկերը չի՝ նշանակեր անտեսել ընդդի-մութեան առաջ քաշած բոլոր փաստերը, որոնք հար-ցականի տակ կը դնեն ընտրութիւններու արդիւնք-ներուն օրինականութիւնը։ Պետական ամէն միջոցի անթաքոյց շահագործումն ու չարաշահումը, ներառ-եալ այն միջոցառումները, որոնք առիթ կրնային տալ կաշառակերութեան ամբաստանութեամբ դատական գործեր յարուցելու, օրէնսդրութեան վերջին պահու փոփոխութիւնները եւ, ի մասնաւորի, ընդդիմադիր գործիչներու դէմ աննախընթաց հալածանքները իրո-ղութիւններ են, որոնց ժխտումը ոեւէ չէզոք դիտորդի համար կարելի է միայն կոյր ձեւանալով։ Ոչ ալ գաղտ-նիք է արտաքին այն զօրակցութիւնը, որ իշխող ու-ժը ստացաւ եւ որ իր տեսակին մէջ աննախընթաց էր անկախութեան յաջորդած բոլոր ընտրութիւններուն ընթացքին։ Ներառեալ՝ Մոսկուայի կողմէ դէպի ռու-սական չուկայ հայաստանեան արտածումներուն վրայ դրուած արգելքները, որոնք շատ հաւանաբար պիտա-նի եղան իշխող ուժին՝ աւելի քան ընդդիմութեան։

Ընտրութեան մասնակցած բոլոր քաղաքական ուժերէն՝ առանձին կուսակցութիւն թէ դաշինք, իւ-րաքանչիւրէն տոկոսային իմաստով աւելի ձայն ստա-ցած ՔՊ–ն, պետական կառոյցին վրայ ամբողջական

վերահսկողութեան եւ արտաքին զօրակցութեան այս երկու գործօններուն վստահութեամբ, հաւանաբար ցուցմունք տուաւ նախ Կեդրոնական ընտրական յանձնաժողովին (ԿԸՅ), ապա նաեւ Սահմանադրական դատարանին, որպէսզի բացառուի երրորդ ընդդիմա-դիր ուժի մը՝ «Բարգաւաճ Հայաստան»–ի անցնումը խորհրդարան։ Պէտք է բացառել նաեւ, որ ո՛չ ԿԸՅ–ը, ո՛չ ալ Սահմանադրական դատարանը պէտք ունեցած ըլլային նման ցուցմունքի։ ՔՊ–ի դրածոյ այդ երկու կառոյցներուն մէջ հանրային ծառայողները, անմիջա-պէս որ անդրադարձան, որ ՔՊ–ն իր ստացած ձայնե-րով եւ արտաքին զօրակցութեամբ այսպէս կամ այն-պէս պիտի մնայ իշխանութեան վրայ, պարզապէս հե-տեւեցան իրենց պաշտօններու պահպանման բնազդի թելադրանքին։

Ինչ կը վերաբերի նուազագոյն տոկոսի շեմը ան-ցած ընդդիմադիր երկու ուժերուն, ընտրութիւններու խնդրայարոյց արդիւնքներու բողոքարկումի որոշու-մէն յետոյ սահմանադրական կարգը պահպանող բո-լոր օրինական քայլերուն դիմելը ոչ միայն բանական, այլեւ ողջունելի քայլ էր, որ կը բացայայտէ պետա-կանութեան օրինականութեան պահպանման իրենց նախանձախնդրութիւնը։ Միւս կողմէ, սակայն, ի բա-ցակայութիւն միասնական պայքարի ռազմավարա-կան նուազագոյն յայտարարի, թէկուզեւ նախընտ-րական մէկ յայտարարութեան տեսքով, եւ ի գիտակ-ցումն 1995–ի, 2008–ի, 2013–ի եւ 2018–ի օրինակով ժողովրդային զանգուածային զօրաշարժի նախա-նշաններու բացակայութեան՝ քաղաքական խաղին մէջ մնալու միակ խաղաթուղթը, որ իրենց ձեռքերուն մէջ կը մնար, մանդատները վերցնելն ու Ազգային ժողով երթալն էր։

Թէ ինչ խօսոյթով կը բացատրուի այդ մէկը կամ ինչ բառամթերքով կը նկարագրուի ընդդիմութեան քաղաքական առաքելութիւնը՝ երկրորդական է։ Կամ թերեւս արդէն ծանթ՞ եթէ ականջալուր ըլլանք երկու ուժերու գործածած բանաձեւումներուն՝ մանդատնե-րու գործիքականութիւն, իշխանութեան օրինականու-թեան չճանաչում, խորհրդարանական եւ փողոցային պայքարներու խոստում... Մէկ խօսքով՝ ամէն ինչ, որ վերիվարոյ լսուեցաւ հինգ տարի առաջ՝ ի խնդիր իշ-խանափոխութեան, որ չիրականացաւ։

Ազգային ժողովին մէջ երկրորդ ընդդիմադիր ու-ժի դիրքին իջած «Հայաստան» դաշինքի պարագային այդ մէկը սպասելի էր, ի մասնաւորի՝ որովհետեւ կայ այն համոզումը, որ, հակառակ անցնող հինգ տարինե-րուն խորհրդարանական գործունէութեան եւ փողո-ցային զօրաշարժի ձեւաչափով իշխանափոխութեան ձախողութեան, այնուամենայնիւ, իշխող ուժին կողմէ յիսուն տոկոսէ պակաս քուէներու ստացումը յաջո-ղութեան փաստ է՝ խրախուսիչ միեւնոյն նպատակին համար պայքարի շարունակման, ընդ որում՝ նոյն սցե-նարով, նոյն հանրային խօսոյթով եւ նոյն դէմքերով։

Իսկ թէ ինչո՞ւ խորհրդարանին մէջ ընդդիմադիր առաջին ուժի տեղը զբաղեցնող «Ուժեղ Հայաստան»–ն ալ փաստօրէն նոյնը, գրեթէ նոյն բառամթերքով, յայ-տարարեց որպէս նաեւ իր քաղաքական գործունէու-թեան արեւելումը, երեւի պատճառը պէտք է փնտել, գոնէ առայժմ, իր կողմէ այլընտրանքային առաջարկի մը կամ տարբեր խօսոյթի մը բացակայութեան մէջ։ Կը մնայ տեսնել, թէ այս միեւնոյն բառամթերքի գործա-ծումը իր համապատասխան գործնականացումը պիտի ունենա՞յ Եւ Ազգային ժողովէն ներս, ե՛ւ, մանաւանդ, փողոցային պայքարի ժամանակ։

Ընտրութիւններու արդիւնքներու այս պատկե-րին հետեւելով՝ դժուար էէ ենթադրել, թէ քաղաքական գործընթացի ընդհանուր տրամաբանութիւնը այնքան ալ պիտի չփոխուի։ Այսինքն՝ ներքաղաքական դաշտին երկփեղկումը պիտի շարունակուի «յաղթողը ամէն ինչ կ’առնէ» սկզբունքով, ուր կը բացառուի փոխհասկա-ցողութեան եւ նուազագոյն համաձայնութիւններու հասնելու դոյզն նախանձախնդրութիւն։ Ժողովրդա-վարութիւնը կը վերածուի «մեծամասնութեան բռնա-կալութեան», ինչպէս դեռեւս 1788–ին բանաձեւած է ԱՄՆ–ի Հիմնադիր հայրերէն եւ երկրորդ նախագահ ձոն Ատամս։ Եւ եթէ Միացեալ Նահանգներու կազ-մաւորման գործընթացի խորհրդածութեանց ծիրին մէջ բանաձեւուած այդ յղացքը զգուշացում էր հակակշռի բացակայութեամբ իշխանութեան բացարձակացման վտանգին մասին, անցնող հինգ տարիներուն, եթէ ոչ դեռեւս 2018–ի իշխանափոխութենէն ի վեր, ան հետզ-հետէ աւելի կը յատկանշէ ժողովրդավարութեան հա-յաստանեան «բրենդ»–ը։ Փաստօրէն, Սահմանադրա-կան դատարանին կողմէ ընտրութեանց արդիւնքներու

բողոքարկման բոլոր պահանջներու մերժումէն անմի-ջապէս յետոյ իշխանութիւններուն կողմէ արդէն իսկ գործադրութեան դրուած բռնատիրական հալածանք-ները ազդանշանէ մը աւելի՝ վարչակարգի բռնակա-լացման գործընթացի սկիզբն են։

Հայաստանի մէջ, ինչպէս հիւսիսային կիսա-գունդի բոլոր երկիրներուն պարագային, ամառնային արձակուրդներու եղանակն է։ Կլիմայական փոփոխու-թեան հետեւանքով պատմականօրէն բարձր ջերմաս-տիճանն ու անոր հետեւանքները՝ լայնածաւալ հրդեհ-ներէն մինչեւ տօթին պատճառով արձանագրուած մահեր, շատ հարցականներ կը ստեղծեն արձակուրդ-ներու ընթացիկ եղանակին մասին։ Ամէն պարագայի, Ուքրանիոյ եւ Ծոցի մէջ շարունակուող պատերազմ-ները արձակուրդ չեն առներ։ Ոչ ալ՝ անոնց առնչա-կից մեծապետական մրցակցութեան ծրագիրները եւ, անոնց շարքին, յատկապէս Կովկասի մէջ ներկայու-թեան, ազդեցութեան գօտիներու հաստատման եւ հա-ղորդակցութեան ճանապարհներու վերահսկողութեան նախաձեռնութիւնները, որոնց կիզակէտին է Զանգե-զուրի թուրանական միջանցքը կամ դիւանադիտական կոռեկտութեան համապատասխանող ԹՐԻՓՓ պաշտօ-նական անուանակոչումը։

Այդ ծրագիրը, փաստօրէն, կը զարգանայ՝ հակա-ռակ իր ստեղծած բոլոր հակասութիւններուն եւ լար-ուածութիւններուն։ Անկախ անկէ, թէ ինչպէս պիտի աւարտի, ԹՐԻՓՓ–ն ամեհնէն աւելի բախտորոշ ծրա-գիրն է Հայաստանի հողային ամբողջականութեան եւ գերիշխանութեան ճակատագրին համար, ընդ որում՝ որոշումներով, որոնք Հայաստանէն դուրս կ’առնուին՝ Երեւանին ձգելով միայն հակազդեցութեան սահմա-նափակ կարելիութիւն։ Ինչ որ անցնող հինգ տարինե-րուն տեսանք եւ ՔՊ–ի՝ իշխանութեան վրայ մնալով պիտի շարունակուի, ամէն ճնշումի դիմաց տեղի տա-լու եւ զիջելու քաղաքականութիւնն է։ Առանց որեւէ պատասխանի՝ «մինչեւ ո՞ւր» հարցումին, որովհետեւ չկայ ոչ մէկ կարմիր գիծ, ոչ մէկ ներագգային համա-ձայնութիւն, որ ի մի բերէր քաղաքական դաշտի բոլոր ուժերը՝ վայելելով հասարակական լայն զօրակցութիւն եւ, իտէալականօրէն, ունենալով Սփիւռքի աջակցու-թիւնը։

Արտաքին ճնշումներուն դէմ գիջողական քաղա-քականութեան աներկբայ շարունակման նպատակով է նաեւ, որ խորհրդարանական մեծամասնութեան տի-րացած եւ իշխանութիւնը պահած ՔՊ–ն ամառնային արձակուրդ չի տար իրաւապահ համակարգին՝ ընդդի-մութիւնը ահաբեկելու համար։ Կարգ մը դիտորդներու համաձայն՝ բռնաճնշումները կրնան միտիլ ընդդիմու-թեան ճամբարէն իշխանական ճամբար տանելու այն չորս–հինգ ձայները, որոնց պէտք ունի «սահմանադ-րական մեծամասնութիւն» ունենալու համար։

Նշենք, որ հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ իշ-խանութեան ճամբարէն ընդդիմութեան ճամբար, ձայ-ներու տեղաշարժ չեղաւ անցնող հինգ տարիներուն, եւ իշխանութիւնը յաջողեցաւ ՔՊ–ի խմբակցութեան բոլոր անդամները համոզել, որ իրենց հաւաքական եւ անհատական շահերու պահպանումը կը պահանջէ կու-սակցապետ–վարչապետին առած բոլոր որոշումներուն ենթարկուելու կուռ կարգապահութիւն։

ՔՊ–ն ունի՞ ժողովրդային զօրաշարժի այն կա-րողութիւնը, որ ցուցաբերեց 2018–ին եւ իշխանափո-խութիւն իրականացուց, կամ մինչեւ իսկ 2021–ին, երբ ընդդիմութեան ժողովրդային զօրաշարժի առաջին փորձերուն հակազդեց իր հետեւորդներու զօրաշար-ժով։ Հարցումը հաւանաբար շատ իմաստ չունի, որով–հետեւ փողոցը կարգի բերելու համար իշխանութիւնը արդէն ամրագրած է ոստիկանապետական ճնշումի համակարգ։

Ինչ կը վերաբերի ընդդիմութեան, անցնող տա-րիները ցոյց տուին, որ ժողովրդային ամենազանդ-ուածային զօրաշարժն իսկ, ի մտի ունենալով թերեւս ամենամարդաշատ Դիմադրութեան շարժումը՝ 2022–ին, ամառնային եղանակին կը դադրի՝ «թէժ աշուն»–ի մը խոստումներով։ Նման խոստումներ չկան ընտրու-թիւններուն յաջորդած այս արձակուրդներուն։ Շատ հաւանաբար՝ որովհետեւ չկայ զօրաշարժ։ Ոչ ալ, ըստ երեւոյթին, կը նախատեսուի Ազգային ժողովի գու-մարման զուգահեռ առաջին զօրաշարժի ազդանշան մը։ Ընդդիմութեան ղեկավար դէմքերու յայտարա-րութիւնները կը վերաբերին երկար ժամանակի վրայ երկարող պայքարի՝ յանուն իշխանափոխութեան։ Կը մնայ հարց տալ, թէ որքա՞ն երկար կը նախատեսուի

Armenia’s Janes Nazaryan wins gold in World Wrestling Championships in Baku

YEREVAN — Armenia’s Janes Nazaryan has again been crowned U17 Greco-Roman wrestling world champion at the World Championships held in Baku, where the Armenian National Anthem played in a packed stadium.

Nazarian defeated Russia’s Aslan Dzuev 4-3 in a hard-fought final, successfully defending his U17 world championship title.

Following his victorious performance, Armenia’s national anthem was played and the country’s national flag was raised during the official medal ceremony at the competition venue in Baku.

Sections of the crowd booed as Nazaryan was presented with

his medal and again during the anthem.

The two-time U17 world champion in Greco-Roman wrestling was proud to champion his nation at the World Championships in Baku.

“My goal was to become world champion, and that was what I had been working toward. I’m happy that I was able to make my people proud and raise our flag high. I wasn’t one hundred percent certain that I would win, but my coach helped me stay calm, and I never doubted my own abilities,” Nazaryan said upon return from Azerbaijan to Armenia.

ANCA-led international campaign prompts Marriott to remove Artsakh tourism package

WASHINGTON — Marriott Bonvoy has removed a controversial tourism package promoting travel to Artsakh following a five-day international campaign led by the Armenian National Committee of America and Armenian advocacy organizations worldwide.

The 14-hour tour, advertised as the “Karabagh: Shusha-Khankendi Tour,” offered guided visits to the Azerbaijani-occupied Armenian cities of Shushi and Stepanakert. The listing made no reference to Artsakh’s Armenian history or to Azerbaijan’s blockade, military assault and forced displacement of the region’s indigenous Armenian population.

The tour was available through Marriott’s activities platform and could be booked using Marriott Bonvoy points. It included a stop at Artsakh’s iconic “We Are Our Mountains” monument, commonly known as Tatik-Papik, which the listing described only as an example of regional stone art and architecture without acknowledging its Armenian identity or

significance.

The Centre for Armenian Research and Analysis first drew attention to the package on July 27. The ANCA, together with Armenian National Committee offices across the diaspora, coalition partners and media organizations, subsequently launched a coordinated international campaign calling on Marriott to remove the listing. The package was taken down within five days.

“Marriott had no business profiting from the suffering of Artsakh’s ethnically cleansed Armenians — no right to run tours normalizing Azerbaijan’s genocide of an indigenous population,” ANCA Executive Director Aram Hamparian said, welcoming the rapid international response.

The ANCA stressed that Artsakh’s displaced Armenian population remains barred by Azerbaijan from returning safely and collectively to its homeland, while Armenian prisoners continue to be held in Baku and Armenian churches and cultural monuments remain under threat.

Armenia plans construction of three new reservoirs

YEREVAN — Armenia plans to begin construction on three new reservoirs before the end of 2026, while another 15 reservoir projects remain at various stages of preparation and development.

Deputy Prime Minister Tigran Khachatryan announced that designs have been completed for the Kasakh, Lichk and Yelpin reservoirs. The Kasakh Reservoir will have a capacity of 10 million cubic metres, while the Lichk Reservoir in Syunik will hold four million cubic metres and the Yelpin Reservoir one million cubic metres. Work on the three

reservoirs is expected to begin by the end of the year.

Plans have also been agreed with the European Bank for Reconstruction and Development for the construction of the Artik and Astghadzor reservoirs, each with a projected capacity of 1.5 million cubic metres. Financing procedures are also being coordinated for the proposed Mastara Reservoir.

Preparatory work is underway for another 12 reservoirs. Once technical assessments are completed, the government will examine options for securing the necessary investment.

Homenetmen breaks Guinness World Record

BYURAKAN — Homenetmen made history on July 28 by earning a place in the Guinness Book of World Records for forming the largest human image of the World Crest Scout Emblem—fleur-de-lis—setting a new world record.

The 809 participants of the 13th Homenetmen Scouting Jamboree currently taking place at the Karnig Meguerdichian Camp in Byurakan, Armenia conceived the idea and with meticulous planning achieved the new world record.

The previous record had been set eight years earlier, on July 29, 2018, in Cheshire, England, with the participation of 445 scouts.

Members of Homenetmen’s Central Executive Committee, together with guests, were present to witness this historic achievement.

JAMBOREE PARTICIPANTS VISIT HOLY ETCHMIADZIN, MEET KAREKIN II

The nearly 900 participants of the 13th Pan-Homenetmen Jamboree visited the Holy See of Etchmiadzin on July 30, where they were received by His Holiness Catholicos Karekin II, Catholicos of All Armenians.

Extending his pontifical blessing to the scouts, Karekin II expressed satisfaction with the gathering of Armenian youth from across the Diaspora in the homeland and commended the educational, cultural and spiritual programs organized as part of the jamboree. The Catholicos emphasized the importance of homeland-oriented initiatives that strengthen young Armenians’ national consciousness and deepen their commitment to serving the Armenian nation and homeland.

He noted that by spending time in Armenia, young people gain firsthand experience of the realities of their homeland while becoming acquainted with the history, culture, spiritual heritage and sacred sites of

the Armenian people, thereby developing a deeper understanding of their national identity. The Catholicos voiced confidence that the participants’ days in Armenia would become an unforgettable experience, enriched by new spiritual encounters, lasting memories and meaningful discoveries.

Karekin II also praised the participants’ patriotism, devotion to God and commitment to the Armenian Church, noting that these values sustain the nation, unite Armenians throughout the world and strengthen the Armenian people’s faith and hope for the future.

Referring to the challenges confronting Armenia and the Armenian nation, the Catholicos stressed that national unity, brotherly solidarity and unwavering dedication to the common national interest are more essential than ever. Only through love, unity and collective effort, he said, can Armenians overcome present trials and build a peaceful, secure and prosperous homeland.

